

Ծղուկ

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 123 կմ,
Հեռավորությունը Միսիան քաղաքից՝ 25 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2220 մ,
Կարգավիճակը՝ բարձր լեռնային,

Նախկինում կոչվում էր Բորիսովկա, իսկ 1925 թվականին կարճ ժամանակով կոչվել է նաև Հայկավան: Ծղուկ անունը գյուղը ստացավ 60-ական թվականներին՝ Ծղուկ գավառի անվամբ: Գյուղի սկզբնական բնակիչները մալական ռուսներն էին: Մալականները 1920-30 ական թվականներին փոխադրվել էին Հյուսիսային Կովկաս: Գյուղից 1 կմ հարավ Կալեր կոչված վայրում կան հին բնակավայրերի հետքեր:

Սպանդարյանի ջրամբարի կառուցման պատճառով գյուղը 1.5 կմ հյուսիս արևելք է տեղափոխվել: Այստեղ ծնվել են սոցիալիստական աշխատանքի հերոս Ս. Խ. Ավետիսյանը, դոկտոր-պրոֆեսոր Գ. Ս. Ղարիբյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝

- անասնապահությունը,

- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 10415 հա, այդ թվում՝

- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 9692 հա, որից՝

- վարելահող՝ 1111 հա, խոտհարք՝ 433 հա, արոտ՝ 6216 հա, այլ հողատեսք՝ 1932 հա

- բնակավայրերի հողեր՝ 53 հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 26 հա

- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 6 հա

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1 հա,

- հատուկ նշանակության հողեր՝ 13 հա,

- անտառային հողեր՝ 143 հա, որից անտառածածկ՝ 143 հա

- ջրային հողեր՝ 480 հա: